ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 օգոստոսի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

113
(2963)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՒՄ ՀԱՄԱՐ Է ԴՈՒՐՍ ԳՐՎԵԼ 15 ՄԼՆ ԴՐԱՄԸ

Armlur.am-ն արդեն տեղեկացրել էր, որ «փաշինյանական հեծանվավազքը» ՀՀ պետական բյուջեի վրա արժեցել է գրեթե 15 մլն դրամ: Մոտ 50 անձ հեծանիվ է վարել, բայց 100 անձրեւանոց են գնել բյուջեի հաշվին եւ 100 անձի կերակրել 2 օր:

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ հարկատուների՝ «Հայաստանի Հանրապետության հերոսի» գրպանից փոխանցված հարկերի հաշվին մոտ 40 հազար ԱՄՆ դոլար է արժեցել Սեւանի շուրջ երկօրյա հեծանվավազքը:

Տեղեկացանք, որ վարչապետի աշխատակազմի եւ «Էլյա Ավագյան» ԱՁ-ի միջեւ կնքվել է միջոցառումների համար ծառայությունների մատուցման 2 պայմանագիր: Օգոստոսի 24-25-ը առաջին պայմանագրով ծախսվել է 9 մլն 604 հազար դրամ, 2-րդ պայմանագրով՝ 5 մլն 34 հազար դրամ:

Առաջին պայմանագրով նախատեսված է եղել 6 (3x3) վրանի վարձույթ 5 տարբեր կետերում, բիոզուգարանների վարձույթ՝ քանակով՝ 36, 6 տարբեր կետերում, 200 վերնաշապիկի, 100 ուսապարկի, 110 անձրեւապաշտպանի վարձույթ, թեպետ կադրերում վրաններն ակնհայտորեն ավելի շատ էին. ինչ միջոցներով՝ անհայտ է:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ պայմանագրով գումար է հատկացվել նաեւ ցուցանակների/կողմնորոշիչների տպագրության, դեկորատիվ շղթայված լույսերի ապահովման (600մ), գեներատորի վարձույթի (30 կվտ) եւ վառելիքի ապահովման, տանձանման 70 պուֆերի (փափկաթոռների) վարձույթի, տրանսպորտային եւ պահնորդական ծառայությունների, ներառյալ՝ սպասարկող անձնակազմի եւ բանվորական ուժի համար:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո «Ժողովուրդ» օրաթերթը Նիկոլ Փաշինյանի ֆեյսբուքյան էջում տեղադրված տեսանյութը ուսումնասիրեց: Տեսանյութում խոշոր պլանով երեւացող կադրերը իլյուզիա են՝ խաբկանք, քանի որ վերեւից՝ հեռակառավարվող դրոնով արված կադրերից ակնհայտորեն երեւում է ամբողջ խմբի տեղաշարժը եւ ապացուցում, որ հեծանվավազքի մասնակիցները հազիվ 50 հոգի են՝ անվտանգության եւ շտապօգնության աշխատակիցներն էլ ներառյալ:

Այս դեպքում հարցական է՝ ում համար է 110 անձրեւապաշտպան գնվել, 200 վերնաշապիկ եւ այլն:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Հաջորդ շաբաթ՝ սեպտեմբերի 2-ին, Արցախի Հանրապետության անկախության հռչակման 33 ամյակն է: Շուրջ 33 տարի առաջ՝ 1991 թվականի սեպտեմբերի 2-ին, Արցախը Ադրբեջանից էլ շուտ հռչակեց իր անկախությունը Խորհրդային միությունից: Ցավոք, Նիկոլ Փաշինյանի իշխանության վարած արտաքին քաղաքականության հետեւանքով այսօր հայկական երկրորդ պետությունը կորսված է եւ պատմության մեջ առաջին անգամ՝ հայաթափված: Արցախի էջը այսուհետ փակված համարող ՔՊ իշխանության օրոք Հայաստանում արդեն վաղուց պետական մակարդակով Արցախի անկախության օրով չի իրականացվում որեւէ միջոցառում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ, փոխարենը, ընդդիմադիր շրջանակներն են այդ օրը մի շարք միջոցառումներ նախատեսել: Սեպտեմբերի 2-ին՝ վաղ առավոտյան, Արցախի իշխանության ներկայացուցիչներն ու պատգամավորները այցելելու են Եռաբլուր, այնուհետեւ ՀՀ Արցախի ներկայացուցչությունում միջոցառում-քննարկում են կազմակերպելու, որը բաց է լինելու ոչ միայն քաղաքական գործիչների, այլ նաեւ արցախահայերի համար: Այդ օրը Արցախի ներկայացուցչություն այց են նախատեսել նաեւ հայաստանյան ընդդիմադիր շրջանակները՝ պատգամավորներն ու գործիչները: Բագրատ սրբազանը եւս սեպտեմբերի 2-ին լինելու է Արցախի ներկայացուցչությունում: Ավելին՝ Արցախի անկախության օրվա նախօրեին՝ սեպտեմբերի 1-ին, ընդդիմադիր շարժումը Սուրբ Աննա եկեղեցու բակում միջոցառում կիրականացնի՝ նվիրված Արցախի Հանրապետության տարեդարձին:



ՀՀ նախկին հատուկ քննչական ծառայության (ՀՔԾ)աշխատակազմի ղեկավար Դավիթ Սուքիասյանը շարունակում է ընդլայնել իր բիզնես գործունեությունը հանքարդյունաբերության եւ բնակարանաշինության ոլորտում: 100% բաժնեմասով նրան պատկանող «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն այս պահին իրականացնում է Երեւանում գտնվող 14 եւ Արտաշատ քաղաքում գտնվող 1 նորակառույց բնակելի համալիրների կառուցապատման աշխատանքները: Բացի սրանից՝ արտոնյալ հարկատու հանդիսացող «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն ակտիվորեն զբաղվում է հանքարդյունաբերությամբ՝ մասնավորապես արտադրելով բետոն, բազալտի խճաքար, գետի խճաքար, գետի ավազ, գետի ավազ՝ լվացված, պերլիտային ավազ, լիթոիդային պեմզա, հրաբխային խարամ, կրաքար: Այսինքն՝ ինքնաբավ շինարարության համար գրեթե ամեն ինչ. սպառողին է մատուցում 9 տեսակի արտադրանք: Թվում է, թե կատարյալ աշխատող ընկերություն է, սակայն «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն մի քանի անգամ ազատվել է մաքսատուրքի արտոնությունից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



Վարչապետի օգնական Հակոբ Աբրահամյանի կողմից ներկայացված կենսագրությունից պարզ է դառնում, որ նրա առաջին աշխատանքը որպես պաշտոնյա եղել է հենց վարչապետի օգնականի պաշտոնը, որը զբաղեցրել է 2022 թվականի մարտի 21-ից: Մինչ այդ նա 2010 թվականից մինչեւ 2019 թվականները զբաղվել է մասնավոր ձեռնարկատիրական գործունեությամբ, այդ ընթացքում՝ 2013-ից մինչեւ 2019 թվականները, եղել է «Պիվդոմ», «Պիվգորոդ-Ս», «Եվրասիա», «Նեվսկի Բերեգ» եւ մի շարք այլ ընկերությունների խմբի (Ռուսաստանի Դաշնություն) արտարժութային գործարքների վերահսկման պատասխանատու, միջազգային համագործակցության պայմանագրերի մենեջեր, ինչպես նաեւ արտաքին տնտեսական գործունեության մենեջեր: 2019-2020 թվականներին զբաղեցրել է «Եվրասիա» ՍՊԸ-ի (Ռուսաստանի Դաշնություն) արտարժութային գործարքների վերահսկման պատասխանատուի պաշտոնը: Նույն՝ 2019 թվականից մինչեւ 2022 թվականը եղել է Հայաստանի՝ մինչեւ 2050 թվականի վերափոխման ռազմավարության անկախ փորձագետ, այնուհետեւ թիմի ղեկավար: Աբրահամյանը իր անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի մասին հայտարարագիրը ներկայացրել է 2024 թվականի մայիսի 3-ին: Նա անշարժ գույք չի հայտարարագրել, իսկ տրանսպորտային միջոցը եղել է 2015 թվականի արտադրության HONDA մակնիշի ավտոմեքենան, որը ձեռք է բերել գնման եղանակով 2020 թվականին. Արշակյանը, սակայն, հաշվետու տարվա ընթացքում շահագործել է իրեն սեփականության իրավունքով չպատկանող, 2011 թվականի արտադրության CHEVROLET մակնիշի ավտոմեքենան: HONDA մակնիշի տրանսպորտային միջոցը հաշվետու տարվա վերջում պահպանվել է: Վարչապետի օգնականի՝ հաշվետու տարվա սկզբում առկա մեկ փոխառության գումարը կազմել է 1.860 եվրո, մյուս փոխառությունը՝ 4 մլն 970 հազար դրամ, որը տարվա վերջում դարձել է 4 մլն 143 հազար դրամ, իսկ նախորդը պահպանվել է առանց փոփոխության:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ԱԺ նախկին նախագահ Տիգրան Թորոսյանի հետ:

Նրա հետ զրուցել ենք ԱՄՆ նախագահի թեկնածուներից, Հայաստանի իշխանությունների հարաբերությունները բարեկամ երկրների հետ վնասելու եւ սեպտեմբեր ամսին սպասվող քաղաքական իրադարձությունների մասին:

-Պարոն Թորոսյան, նոյեմբերին Ամերիկայի Միացյալ Նահանգներում կկայանան նախագահական ընտրությունները, որի համար իրենց թեկնածուներն են առաջադրել Դոնալդ Թրամփն ու Քամալա Հարրիսը, ո՞ր թեկնածուի նախագահությունն ավելի բարենպաստ պայմաններ կստեղծի Հայաստանի Հանրապետության համար:

-Հայաստանի համար բարենպաստ կլինի միայն այն դեպքում, երբ ՀՀ իշխանություններն աշխատանք տանեն այդ ուղղությամբ. էականորեն կախված չէ նրանից, թե ով կլինի Միացյալ Նահանգների կամ որեւէ այլ երկրի ղեկավարը:

-Իսկ ի՞նչ կասեք այն մասին, որ Հայաստանի իշխանությունները, կարծես թե, փորձում են փչացնել երկրի հարաբերությունները մի շարք պետությունների հետ, քանի որ նման խոսակցություններ, այնուամենայնիվ, կան: Օրինակ՝ ի՞նչ փուլում են Ռուսաստանի Դաշնության հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունները՝ ըստ Ձեզ:

-Ես կարծում եմ՝ միայն կույրը կարող է չտեսնել, որ այդ հարաբերությունները վաղուց շատ ցածր մակարդակի վրա են, եւ դրանից Հայաստանը, բնականաբար, տուժում է: Ի դեպ, այս հարցում նույնպես նույն խնդիրն է: Ոչ թե պետք է լինել ամերիկամետ, ռուսամետ կամ եվրոպամետ եւ այլն, այլ պետք է աշխատել Հայաստանի Հանրապետության համար, իսկ դրա համար պետք է լինել ոլորտի գրագետ մասնագետ եւ ամեն բան կստացվի: Իսկ մասնագետ չլինելու պարագայում՝ որեւէ նշանակություն չունի, թե ում նկատմամբ ավելի բարեհաճ վերաբերմունք ունեք, կամ չունեք. դուք միշտ կտուժեք այնպես, ինչպես մենք շատ հաճախ տեսնում ենք վերջին տարիներին մեր կյանքում:

-Իսկ ի՞նչ կասեք Վլադիմիր Պուտինի՝ վերջին շրջանի քաղաքականության մասին: Հաշվի առնելով անցյալ շաբաթ նրա այցը Բաքու՝ ի՞նչ եք կարծում, արդյոք հայ-ռուսական հարաբերությունները քանդվա՞ծ են:

-Երբ Պուտինը հանդիպում է Ալիեւի հետ, ապա կարելի է խոսել Ադրբեջանի հետ հարաբերությունների մասին եւ հաստատել, որ վերջին տարիներին էապես բարելավվել են Ադրբեջանի հետ Ռուսաստանի Դաշնության հարաբերությունները:

-Սեպտեմբերից քաղաքական դաշտում գործողություններ են սպասվում. նոր փուլ է մտնելու «Սրբազան պայքարը», ի՞նչ եք կարծում, արդյոք այն կհաջողի՞:

-Լավ աշխատանք տանելու դեպքում՝ անպայման կհաջողի:

Երկրում առկա խնդիրները պետք է հանրամատչելի բացատրվեն մարդկանց:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԻՐԱՎԱՐՁԱՅԻՆ

ԶՐԱՀԱԲԱՃԿՈՆԸ ԱՆՊԱԿԱՍ Է ՓԱՇԻՆՅԱՆԻՑ

Նիկոլ Փաշինյանը հեծանիվը դարձրել է իր քաղաքական խորհրդանիշը, իսկ հեծանվային զբոսանքը՝ ամենօրյա հոբբին:

Նա բավականին ակտիվ իր սոցիալական հարթակներում լուսաբանում է հեծանիվով զբոսանքի ողջ գործընթացը՝ հանրության մոտ տպավորություն ստեղծելով, թե ինքը որեւէ անհանգստություն ու վախեր չունի, կարողանում է առանց անվտանգային միջոցառումների անհոգ շրջել քաղաքացիների շրջանում:

Իրական պատկերը, սակայն, լրիվ այլ է:

Հենց Նիկոլ Փաշինյանի հրապարակած տեսանյութերից ու լուսանկարներից ակնհայտ երեւում է, որ նա անգամ իր ամենասիրելի զբաղմունքի՝ հեծանվավազքի ու զբոսանքի, մշտապես դուրս է գալիս անվտանգային խիստ վերահսկողությամբ:

Նախ, Փաշինյանին իր զբոսանքի ընթացքում հսկում են մեծաթիվ թիկնապահներ, ոստիկանական խմբեր: Այս ամենն էլ բավարար չէ՝ Փաշինյանի անհանգստությունները սեփական կյանքի համար այնքան մեծ են, որ նա զրահաբաճկոն է կրում, ինչը հստակ երեւում է հրապարակած լուսանկարներից:

Նկատենք նաեւ, որ հեծանվարշավների ժամանակ նրան հիմնականում ուղեկցում են նրա կինը, ծանոթները եւ թիմակիցները՝ Արսեն Թորոսյանը, Հայկ Սարգսյանը եւ այլք:

Փաստորեն, Նիկոլ Փաշինյանն անգամ իր մտերիմ շրջապատին չի վստահում ու նրանց ուղեկցությամբ էլ զբոսանքի դուրս է գալիս բացառապես զրահաբաճկոնով:

ԱԺ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ ԿԼԻՆԵՆ

Սեպտեմբերի 4-ին՝ ժամը 12:00-ին, նիստ կհրավիրի ԱԺ արտաքին հարցերի մշտական հանձնաժողովը:

Օրակարգում 3 հարց է՝ «ԱՊՀ շրջանակներում կնքված բազմակողմ պայմանագրերի դադարեցման մասին» արձանագրությունը վավերացնելու մասին հարցը, Հայաստանի եւ Թունիսի կառավարությունների միջեւ դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց համար վիզայի պահանջի վերացման մասին համաձայնագիրը վավերացնելու մասին հարցը եւ Հայաստանի ու Վրաստանի միջեւ դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների կողմից վարձատրվող գործունեություն իրականացվելու մասին համաձայնագիր վավերացնելու մասին հարցը:

Սեպտեմբերի 6-ին՝ ժամը 11:30-ին, նիստ կհրավիրի ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, որի օրակարգում 6 հարց է:

Սեպտեմբերի 3-ին՝ ժամը 10:00-ին, նիստ կհրավիրի պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովը:

Օրակարգում ընդգրկված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին, «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին, ՀՀ ընտրական օրենսգրքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծերը եւ այլ նախագծեր:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՊԱՅՔԱՐԸ ԿԱՐՈՂ Է ԵՐԿԱՐ ՏԵՎԵԼ

«Հայաստանի Հանրապետությունն իշխանություն չունի», - Սուրբ Աննա եկեղեցու բակում, լրագրողների հետ զրույցում ասաց Բագրատ Սրբազանը:

«Այս մարդիկ զբաղեցնում են իրենց աթոռները հակասահմանադրական միջոցներով եւ սահմանադրական հեղաշրջում կատարած լինելով մեր երկրում»,- ասաց նա:

Սրբազանը արձագանքեց նաեւ դիտարկումներին, թե պայքարը կարող է նախատեսվածից ավելի երկար տեւել:

«Ոչ ոք ձգձգելու, երկարացնելու տրամադրություն չունի: Մենք էլ ենք պատրաստության մեջ՝ թշնամին էլ: Թշնամի ասելով՝ նկատի ունեմ Հայաստանի իշխանություններին, որովհետեւ նրանք մեր ընդհանուր թշնամու ներկայացուցիչներն են»,- ասաց Բագրատ Սրբազանը:

ԵԽԽՎ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) նախագահ Թեոդորոս Ռուսոպուլոսն արձագանքել է Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովի այն հայտարարությանը, թե ԵԽԽՎ որոշ անդամներ այդ երկրում «պերսոնա նոն գրատա» կհամարվեն:

«Սա ավելի քան ցավալի ազդակ է, որը միայն բարդացնում է Ադրբեջանի ներկայիս վիճակը Եվրոպայի խորհրդում: Անդամ պետությունները պարտավորություն են ստանձնել պահպանել ժողովրդավարության չափանիշները, եւ նրանց, ովքեր քվեարկել են խղճի մտոք, սեւ ցուցակում ընդգրկելը կարող է հանգեցնել միայն հակառակ արդյունքի», - ասված է ԵԽԽՎ մամուլի ծառայության տարածած հայտարարության մեջ:

ՀԱՅՑԵԼ ԵՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը 2023 թվականի հուլիսի 23-ին գրել էր հոդված՝ «ԲՀԿ-ից ՔՊ. Բագրատյանի ունեցվածքը» վերտառությամբ:

«Ժողովուրդ» օրաթերթը կատարել էր Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանի հայտարարագրի համալիր վերլուծություն: Մանրամասն նշել էինք՝ ինչ ունեցվածք ուներ Բագրատյանը՝ մինչ հեղափոխությունը եւ հեղափոխությունից հետո:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հրապարակման մեջ շրջանառվող տեղեկությունների հիման վրա հայտարարագրված տվյալների ստուգման արդյունքում որոշել է իրականացնել Սերգեյ Բագրատյանի եւ նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի համալիր վերլուծություն:

Վերլուծության արդյունքում արձանագրված պարզաբանման ենթակա հարցերի եւ անհամապատասխանությունների վերաբերալ Հանձնաժողովը Սերգեյ Բագրատյանից եւ նրա կնոջից հայցել է պարզաբանումներ եւ հիմնավոր փաստաթղթեր:

Ստացված պարզաբանումները գնահատման փուլում են:

ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿՎՈՒՄ Է ԱՌԱՆՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ադրբեջանի ԱԳ նախարարն այսօր (խմբ.) մեկնում է Անկարա՝ հանդիպելու իր թուրք գործընկերոջը: Ըստ այդ հանդիպման պաշտոնական հաղորդագրության՝ քննարկվելու են հայ-ադրբեջանական եւ հայ-թուրքական հարաբերություններին առնչվող թեմաներ:

Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը:

«Օրեր առաջ էլ հայ-ադրբեջանական թեման երկկողմ քննարկման առարկա էր դարձել Բաքվում՝ ՌԴ նախագահի այցի շրջանակներում:

Ի՞նչ է ստացվում. Հայաստանին վերաբերող հիմնական արտաքին քաղաքական հարցերը ոչ միայն քննարկվում են Հայաստանից դուրս, այլ նաեւ ՀՀ-ի բացակայության պայմաններում:

Արտաքին դերակատարները, մեր նկատմամբ թշնամաբար տրամադրված երկրները սահմանում են օրակարգեր, առաջնահերթություններ, իսկ հայաստանյան իշխանությունները միակ բանը, որ ստեղծված իրավիճակում անում են՝ հասարակությանը արհեստական լայվերով, տիկտոկյան նյութերով շրջափակելն է ու առանցքային խնդիրներից մեկուսացնելը»,-գրել է նա:

ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրացական ընդդիմադիր լրատվամիջոցները, հղում անելով իրենց աղբյուրներին, հայտնում են, որ իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը նախատեսում է ուղղափառությունը պետական կրոն հայտարարել:

Լրագրողները պարզել են, որ «Վրացական երազանքի» նախընտրական ծրագրի «առեղծվածային» կետը նախատեսում է ուղղափառությունը պետական կրոն հռչակել, այս տեղեկությունը նրանց հաստատել են մի քանի աղբյուրներ:

Երկուշաբթի՝ օգոստոսի 26-ին, Վրաստանի պատրիարքարանը, իբր, արդեն խորհրդակցություն է անցկացրել բարձրաստիճան հոգեւորականների մասնակցությամբ այս հարցի շուրջ այն բանից հետո, երբ նման նախաձեռնությունը գաղտնի ստացվել է իշխանություններից:

Համայն Վրաստանի պատրիարք Իլյա Երկրորդը, իբր, դեմ է դրան՝ պատճառաբանելով, որ դա անհրաժեշտ չէ, եւ դեռ չի եկել նման քայլի պատմական պահը: Նաեւ որոշ եկեղեցականների հակափաստարկն այն է, որ այս դեպքում եկեղեցին ավելի քիչ անկախ կդառնա պետությունից:

Իշխանությունների կողմից նույնպես պաշտոնական հայտարարություններ դեռեւս չեն եղել, սակայն «Վրացական երազանքը» բացահայտ ասել է, որ իրենց նպատակն է «պաշտպանել Վրաստանի ինքնությունն ու ազգային արժեքները», իսկ կուսակցության հիմնադիր Բիձինա Իվանիշվիլին հայտարարել է, որ մոտ ապագայում հանրությանը կտեղեկացվի «Վրաստանի եւ քրիստոնեական հավատքի համար էկզիստենցիալ նշանակություն ունեցող շատ կարեւոր խնդրի մասին»:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՀՀ-Ն «ՋՐՈ ԴԱՇՆԱԿԻՑ» ՎԻՃԱԿՈՒՄ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Այլընտրանքային նախագծեր» խմբի անդամ, քաղաքական վերլուծաբան Վահե Հովհաննիսյանը զրառում է արել իր ֆեյսբուքյան էջում, որը ներկայացնում ենք ստորեւ.

«Ադրբեջանի քաղաքագիտական, պետական շրջանակներում կա ձեւակերպում. «Խաղաղօվկիանոսյան նավատորմը Կասպից ծով չի կարող հասնել»: Համառոտ՝ սա Ադրբեջանի սառը հաշվարկված արտաքին քաղաքականությունն է, որի շնորհիվ այն լուրջ գործընկեր է միաժամանակ Արեւմուտքի ու Ռուսաստանի համար, եւ նրա ազգային շահերն ու նույնիսկ հակամարդկային քայլերը դառնում են «ընկալելի»:

Վրաստանի վարչապետ Ի. Կոբախիձեն ասում է. «Մենք չտրվեցինք հսկայական համակարգված ճնշմանը, չբացեցինք երկրորդ ճակատ (Ռուսաստանի դեմ), չմիացանք պատժամիջոցներին, որոնք կարող էին երկիրը տանել պատերազմի եւ տնտեսական աղետի»:

Լուրջ պետությունները սիրողականներից տարբերվում են առաջին հերթին բովանդակությամբ, մտածողության առկայությամբ: Այս ադրբեջանական, վրացական ձեւակերպումների տակ կոնկրետ նպատակներ են դրված՝ ազգային խնդիրներ, ենթակառուցվածքային լուրջ նախագծեր, անհավանական թվացող լուծումներ, մեծ փողեր, կոմունիկացիաների տարբերակներ՝ նոր ճանապարհներ, երթուղիներ եւ այլն:

Ինչ ունենք Հայաստանում. աշխարհի մասին գավառական պատկերացումներով մի իշխանություն, որը բոլորի հետ փչացնելով հարաբերությունները՝ աղետ բերեց մեր երկիր, եւ մենք այսօր գտնվում ենք «ՋՐՈ դաշնակից» վիճակում:

Անմիտ պետությունները պատժվում են դաժանորեն, եւ նրանց անմիտ վերնախավերը կրում են ուղղակի պատասխանատվություն:

Ինչ է իրենից ներկայացնում այսօրվա հայաստանյան քաղաքական միտքը. արեւմտամետների ու ռուսամետների բաժանված ճամբարներ, որոնք քաղաքական գնչուների պես «դաբրոներ» են ակնկալում մոսկվաներում, բրյուսելներում, վաշինգտոններում: Մեր հավաքական միտքը՝ անկախ որեւէ ճամբարից, չի փորձում Հայաստանի հետպատերազմյան վերականգնման տեսլականը մշակել ու որեւէ ռացիոնալ բան առաջարկել սեփական ժողովրդին ու արտաքին աշխարհին՝ հատուկենտ գործիչների բացառությամբ:

Բոլոր մտածող երկրները դնում են կարճաժամկետ եւ ստրատեգիական նպատակներ: Ի՞նչ է անում Երեւանը. Երեւանը չկա, անլեզու, անդեմ, անիմաստ մի միավոր է, որին արդեն առանց դիվանագիտական կոռեկտության ասում են «այսպես շարունակեք՝ մորթվելու եք», ու Երեւանը, միեւնույնն է, դա էլ չի հասկանում:

Մեզանում անմտությունը գրավել է բոլոր կենսական ոլորտները: Մեր քաղաքական միտքը ազգային-ապազգային արխայիկ բարիկադավորման մեջ է: Մենք ոչ մի ռացիոնալ նպատակ չենք դնում. սա սարսափելի իրողություն է: Մենք այլեւս չենք էլ հասկանում՝ դրսից մեզ ինչ են ասում, ուր է տանում պրոցեսը: Մենք նույնիսկ մեր երկրով անցնելիք մի ճանապարհի կամ մի խողովակի ճիշտ տարբերակը մեզ համար չենք կարողանում հաշվարկել ու առաջ տանել:

Պետությունները եւ ժողովուրդները երբեք չեն հասնում իրենց նպատակներին, եթե չեն ձեւակերպում այդ նպատակները:

Հարցը մեր մարդկային, քաղաքական ռեսուրսի մեջ է. պիտի կարողանանք ձեւավորել նոր բովանդակությամբ ու նոր խաղի կանոններով վերնախավ, որը խիզախորեն կխոսի սեփական ժողովրդի հետ ու կվերցնի պատասխանատվություն. ոչ թե շարունակենք կա՛մ սպասարկել «մեծարգոյին» կա՛մ էլ կառչել դիզած հարստությունից ու սպասել հրաշքի: Մի տարի առաջ արդեն սպասել ենք հրաշքի եւ ունենք կորսված Արցախ»:

Քաղաքագետն ամփոփել է՝ նշելով. «Կատարված ու հավանական աղետի ծավալներն այնքան սահմռկեցուցիչ են, որ հանրային կյանքում անխուսափելի է դառնում բարդ-ցավոտ հարցերի հրապարակային քննարկումը, որը հետագայում վերածվելու է լուրջ ռազբորկայի»:

Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ «Ժողովրդավարական ուժերի հարթակ»-ը ԵՄ-ին անդամակցության հարցով հանրաքվե սկսելու փաստաթղթեր է ներկայացրել ԿԸՀ: 50 հազար ստորագրություն հավաքելու դեպքում՝ նրանք համապատասխան փաստաթղթերը պետք է ներկայացնեն ԱԺ՝ պահանջելով Հայաստանի՝ ԵՄ անդամակցության հարցով հանրաքվե անցկացնել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Հայաստանի Եվրոպական» կուսակցության ղեկավար Տիգրան Խզմալյանը, ով «Ժողովրդավարական ուժերի հարթակ»-ի անդամ է, ասաց, որ ԿԸՀ-ն չի ընդունում իրենց թղթերը. «Մենք լիազորագրեր ենք տվել մարդկանց, որպեսզի տարբեր քաղաքներում մեր կուսակցությունները ներկայացնեն, նոտարը պետք է հաստատի լիազորագրերը:

Մեր թիմերի ղեկավարները 44 հոգի են ընդհանուր առմամբ, իսկ ԿԸՀ-ն պահանջում է, որ այդ թղթերը լիազորված լինեն մի նոտարի փաստաթղթով, այլ ոչ թե 44 առանձին:

Մենք հիմա վեճի մեջ ենք ԿԸՀ-ի հետ, քանի որ շատ դժվար է մեզ համար այլ քաղաքներից մեր ներկայացուցիչներին բերել Երեւան, բոլորին մի տեղ հավաքել ու նոտարին խնդրել մեկ օրվա մեջ այդ հարցը լուծել:

Մենք ասել ենք, որ օրենքը նման պահանջ չի դնում, նման նախադեպ չկա, դա ֆիզիկապես անհնար է: Հիմա ԿԸՀ-ն քննարկում է այդ հարցը՝ թույլ տա առանձին լիազորություններով գործընթացը սկսել, թե ոչ»,-ասաց Խզմալյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԻՐԱՆԸ ԴԱՏԱՐԱՆ ԿԴԻՄԻ

Իրանը վերջնական ծանուցում է ուղարկել Պակիստանի կառավարությանը՝ 2024 թ. սեպտեմբերին Փարիզի Առեւտրի միջազգային պալատին առընթեր Միջազգային արբիտրաժային դատարան դիմելու մտադրության մասին՝ կապված Իսլամաբադի կողմից «Խաղաղություն» մագիստրալային գազատարի կառուցման պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետ:

Խողովակաշարի պակիստանյան հատվածի կառուցման մասին համաձայնագիրն ստորագրվել է 2009 թվականին: Իսլամաբադը պարտավորվել է նախագծի իր մասն ավարտել մինչեւ 2014 թ. դեկտեմբեր: Փաստաթղթում կետ էր մտցվել ժամկետների խախտման համար տուգանային պատժամիջոցների վերաբերյալ, որով Պակիստանն ուշացման յուրաքանչյուր օրվա համար 1 միլիոնական դոլար պետք է վճարեր 2015 թ. հունվարի 1-ից: 2014 թվականին շինարարությունը 10 տարով հետաձգվել է Թեհրանի նկատմամբ ԱՄՆ-ի պատժամիջոցների պատճառով:

2019 թ. սեպտեմբերին Պակիստանի Inter-State Gas Systems-ը եւ Իրանի National Iranian Gas Company-ը ստորագրեցին վերանայված պայմանագիր, որի համաձայն՝ Իսլամաբադը պարտավորվել է խողովակաշարն ավարտին հասցնել 2024 թվականին եւ օրական ներմուծել շուրջ 21 միլիոն խորանարդ մետր բնական գազ: Փոխարենը Թեհրանը համաձայնել է ձեռնպահ մնալ արբիտրաժային դատարան դիմելուց:

Այնուհետեւ, ըստ The News թերթի, նախագծի առաջին հերթի (81 կմ երկարությամբ հատված) հանձնումը հետաձգվեց մինչեւ 2024 թ. սեպտեմբեր: Սակայն հատվածի շինարարությունը չսկսվեց, նշում է հրատարակությունը: Դրա հետ կապված՝ Թեհրանը «վերջնական ծանուցում» է ուղարկել Իսլամաբադին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչության ծանր հանցագործությունների ֆնությունը բաժնում ֆնվող ֆրեական վարույթով բացահայտվել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերությունում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից, նույն ընկերության մի քանի աշխատակիցների օժանդակությամբ, շուրջ 410 մլն. ՀՀ դրամ գումարի հափշտակության, փաստաթղթերի կեղծման դեպքը:

Փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ նշված պաշտոնատար անձը, 2014-2019 թթ. ընթացքում համապատասխան հրամաններ է արձակել՝ իրեն եւ ընկերության 10 աշխատակիցներին Վրաստանի Թբիլիսի քաղաք գործուղելու վերաբերյալ, որի հիման վրա ինքը եւ հիշյալ աշխատակիցները ստացել են ընդհանուր՝ 24.727.872 ՀՀ դրամ:

Մինչդեռ պարզվել է, որ նշված աշխատակիցները փաստացի կամ գործուղման չեն մեկնել, կամ մեկնել են արձանագրված ոչ ամբողջ ժամանակահատվածով:

Նույն ժամանակահատվածում նա նաեւ համապատասխան հրամաններ է արձակել՝ Թբիլիսի քաղաք գործուղման նպատակով ընկերության 3 վարորդներին 215.150 ՀՀ դրամ արժեքով ընդհանուր 640 լիտր բենզին հատկացնելու վերաբերյալ: Կատարվել են նաեւ այլ հափշտակություններ:

Բացի այդ, պարզվել է, որ ՓԲԸ-ի ղեկավար պաշտոն զբաղեցնող նշված անձը, չունենալով ինքն իրեն լրացուցիչ աշխատավարձ հանդիսացող վճարներ (պարգեւավճարներ, հավելավճարներ եւ այլն) տրամադրելու լիազորություն, 2014 թ. հունվարից մինչեւ 2024 թ. հունիս, համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապօրինի, ընկերության մեկ այլ աշխատակցի օժանդակությամբ, արձակել է իրեն լրացուցիչ աշխատավարձ հանդիսացող վճարներ տրամադրելու վերաբերյալ հրամաններ՝ այդ կերպ հափշտակելով 216.328.750 ՀՀ դրամ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա ՓԲԸ-ի ղեկավար պաշտոն զբաղեցնող նշված անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում եւ ներկայացվել է մեղադրանք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով եւ 457-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում են համապատասխանաբար ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին եւ 325-րդ հոդվածի 2-րդ մասին): Նրա նկատմամբ որպես համակցված խափանման միջոցներ են կիրառվել բացակայելու արգելքը, պաշտոնավարման կասեցումը եւ գրավը՝ 25.000.000 ՀՀ դրամի չափով:

Նրան օժանդակելու համար քրեական հետապնդումներ են հարուցվել նաեւ ՓԲ ընկերության 6 աշխատակիցների, որոնցից հինգի նկատմամբ որպես համակցված խափանման միջոցներ են կիրառվել բացակայելու արգելքը եւ պաշտոնավարման կասեցումը, իսկ վարորդներից մեկի նկատմամբ՝ բացակայելու արգելքը:

Նախաքննության ընթացքում վերականգնվել է պետությանը պատճառված վնասից 31.459.445 ՀՀ դրամը:

Քրեական վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ վարույթը դատարան ուղարկելու համար:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԴԵՊՔԸ

2024 թվականի օգոստոսի 15-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության աշխատակիցների կողմից Երեւան քաղաքի Աճառյան փողոցում, ծառայություն իրականացնելու ընթացքում, թմրամիջոց եւ զենք պահելու կասկածանքով, Ոստիկանության բաժին է տեղափոխվել Երեւան քաղաքի բնակիչ 29-ամյա երիտասարդ, ով հայտնել է, որ իր մոտ առկա են «Մարիխուանա» եւ «Կրիստալ» տեսակի թմրամիջոցներ եւ գազային ատրճանակ:

Վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են 2 փաթեթ՝ 4.11 գրամ քաշով եւ 0.89 գրամ քաշով «Մարիխուանա», 1 փաթեթ՝ ընդանուր 0.69 գրամ քաշով, «Կրիստալ» տեսակի թմրամիջոցներ, ինչպես նաեւ՝ «Մակարով» տեսակի ատրճանակ:

Որոշում է կայացվել՝ հանցավոր արարք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով նշված անձին ձերբակալելու մասին:

Քննությամբ պարզվել է, որ վերջինս թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվելու շուրջ նախնական համաձայնություն ձեռք է բերել Երեւան քաղաքի մեկ այլ բնակչի հետ:

Վերջինիս ցուցումով եւ հանձնարարությամբ 29-ամյա տղամարդը «Մարիխուանա» եւ «Կրիստալ» տեսակի թմրամրջոցի փաթեթներ է տեղադրել Երեւան քաղաքի տարբեր հատվածներում, որոնք լուսանկարել եւ ուղարկել է նրան:

2024 թվականի օգոստոսի 16-ին, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, ձերբակալվել է նաեւ 29-ամյա տղամարդու վերոհիշյալ ծանոթը:

Նախաքննության ընթացքում խուզարկություն է կատարվել վերջինիս բնակության հասցեում, որի արդյունքում հայտնաբերվել եւ վերցվել է 97 զիփ փաթեթ:

Հայտնաբերված զանգվածների բաղադրությունը պարզելու նպատակով նշանակվել է դատաքիմիական փորձաքննություն:

Միջնորդություն է ներկայացվել վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին՝ 29-ամյա տղամարդու նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով, իսկ վերջինիս ծանոթի նկատմամբ՝ 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որոնք բավարարվել են: Միջնորդություններ են ներկայացվել դատարան՝ վերջիններիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որոնք բավարարվել են:

ԿԱԼԱՆՔԻ ԺԱՄԿԵՏԸ ԿՐՃԱՏՎԵԼ Է ՄԵԿ ԱՄՍՈՎ

Աշոտյանի կալանքի ժամկետը կրճատվել է մեկ ամսով՝ մինչեւ սեպտեմբերի 15-ը: Այս ամսին ֆեյսբուքյան էջում գրել է փաստաբան Տիգրան Աթանեսյանը:

«Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը մասնակի բավարարել է պաշտպաններիս վերաքննիչ բողոքները Արմեն Աշոտյանի կալանքի ժամկետը հերթական անգամ 3 ամսով երկարացնելու որոշման դեմ եւ այն կրճատել է մեկ ամսով՝ մինչեւ սեպտեմբերի 15-ը»,-գրել է նա:

Հիշեցնենք, որ Արմեն Աշոտյանը մեղադրվում է պաշտոնեական դիրքի չարաշահման եւ փողերի լվացման համար, որն առաջացրել է ծանր հետեւանքներ:

ԼՈՒՐԵՐ

ՄԵՐԺՎԵԼ Է Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ՍԴ-ն մերժել է ԲԴԽ նախկին նախագահ, Երեւանի ընդհանուր իրավասության նախկին դատավոր Ռուբեն Վարդազարյանի դիմումի քննությունը՝ պատճառաբանելով, թե խախտվել են ՍԴ դիմելու ժամկետները:

Հիշեցնենք, որ Ռուբեն Վարդազարյանն արդեն երկրորդ անգամ է ՍԴ դիմում ներկայացնում՝ վիճարկելով իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու, իր լիազորությունները դադարեցնելու ԲԴԽ որոշումը: ՍԴ-ն ներկայացված առաջին դիմումի քննությունը կարճել է դեռ 2023 թ. հոկտեմբեր ամսին: Այս անգամ Վարդազարյանը դիմումը ներկայացրել է նոր ի հայտ եկած հանգամանքին հիմքով: Մասնավորապես, ՍԴ-ն Դավիթ Հարությունյանի գործով որոշում էր կայացրել՝ արձանագրելով Կարեն Անդրեասյանի նախագահությամբ ԲԴԽ-ի կողմից նրա իրավունքների խախտումը, այդ թվում՝ լսված լինելու՝ դատավորի եւ նրա ներկայացուցիչների բացակայությամբ գործը քննելու առումով:

Այս որոշումից հետո Վարդազարյանի անունից դիմում է ներկայացվել, քանի որ դեռ Գագիկ Ջհանգիրյանի պաշտոնավարման շրջանում ԲԴԽ-ն 2022 թ. գործը քննել է առանց Վարդազարյանի եւ նրա ներկայացուցչի մասնակցության, թեեւ ստացվել են համապատասխան դիմումները, որով խնդրել էին հետաձգել նիստը: Ի դեպ, այդ արատավոր պրակտիկան «ակտուալ» է նաեւ այսօր, բոլորովին վերջերս ԲԴԽ-ն դադարեցրեց դատավոր Աննա Դանիբեկյանի լիազորությունները՝ հինգ որպե ուշացման պատճառով հնարավորություն չտալով դատավորին՝ դիրքորոշում հայտնել:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՌԵՎԱՆԳՄԱՆ ԳՈՐԾՈՎ

ՀՀ ՔԿ-ից տեղեկացնում են, որ 2024 թ. օգոստոսի 23-ին՝ ժամը՝ 00:30-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողներն Աճառյան 1 հասցեի մոտ կանգնեցրել են «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենա, որի բեռնախցիկում հայտնաբերվել է օտարերկրացի տղամարդ:

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով վերոնշյալ 7 անձինք ձերբակալվել են: Բեռնախցիկում հայտնաբերված անձը ճանաչվել է տուժող:

Պարզվել է, որ Վայոց ձորի բնակիչ 36-ամյա տղամարդը Հնդկաստանի 32-ամյա քաղաքացուց պահանջել է իր կողմից վերջինիս շահագործմանը հանձնված «Նիսսան Տիդա» մակնիշի ավտոմեքենան վթարի ենթարկելու հետեւանքով իրեն պատճառած վնասի գումարը, սակայն մերժվել է, որից հետո Հնդկաստանի 6 քաղաքացիներին հրահանգել է առեւանգել նրան:

7 մեղադրյալների համար, որպես խափանման միջոց, ընտրվել է կալանքը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 26-ից 27-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 127 դեպք, որից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

2 ԴՊՐՈՑ՝ 148 ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՐ

2023 թ. հունիսի 1-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք ուղարկել Դիլիջան համայնքի Գոշ գյուղի հիմնական եւ միջնակարգ դպրոցների աշակերտների եւ ուսուցիչների թվաքանակի, դպրոցների պահպանման ծախսերի, այդ դպրոցների միավորման ծրագրի մասին: Մարզպետարանից պատասխանել են. «Գոշի միջնակարգ դպրոցն ունի 109 աշակերտ, հիմնական դպրոցը՝ 39 աշակերտ: Կառավարության՝ «300 դպրոց եւ 500 մանկապարտեզ» ծրագրով Գոշ գյուղում կառուցվելու է մեկ մոդուլային դպրոց: Աշխատանքները գտնվում են նախագծային փուլում: Գոշի հիմնական դպրոցի՝ 2022 թվականի պահպանման ծախսերի ֆինանսավորումը կազմել է 26611,6 հազար դրամ, իսկ Գոշի միջնակարգ դպրոցինը՝ 50226,8 հազար դրամ»: 2024 թ. օգոստոսի 6-ին Տավուշի մարզպետին հարցում ենք ուղարկել՝ ի՞նչ եղավ Գոշի հիմնական եւ միջնակարգ դպրոցների միավորման գործը: Մարզպետարանից պատասխանել են. «Գոշ գյուղի ձգվածության եւ դպրոցների միջեւ 3 կմ հեռավորության պատճառով դպրոցների վերամիավորում չի իրականացվելու, քանի որ Գոշի հիմնական դպրոցի աշակերտների համար կստեղծվի դժվարություն միջնակարգ դպրոց հասնելու համար»: Անցյալ տարի, երբ նախատեսել էիք այդ դպրոցները միավորել, մոտ 1130 բնակիչ ունեցող Գոշ գյուղը ձգված չէ՞ր, այդ դպրոցների միջեւ 3 կմ հեռավորություն չկա՞ր: 148 աշակերտի համար գյուղում 2 դպրոց եք պահում, պետբյուջեից տարեկան 77 միլիոն դրամ ծախսում:

ՃԱՆԱՊԱՐՀԻ ՇԱՏ ՀԱՏՎԱԾՆԵՐ ՔԱՆԴՎԱԾ ԵՆ

Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի Դիլիջան համայնքի հատվածում, Դիլիջանի «Գետափ» ռեստորանահյուրանոցային համալիրի մոտ ճանապարհի եզրը մեծ երկարությամբ քանդված է: Քանդված հատվածը ժապավենով մեկուսացված է, սակայն դա չի կարող խանգարել, որ խոշոր մի բեռնատար, կամ այլ ավտոմեքենա ընկնի իջվածքի մեջ: Նման քանդված մեծ հատված կա նաեւ միջպետական ավտոճանապարհի Թեղուտ գյուղի եզրով ձգվող տարածքում: Մայիսի 25-26-ին տեղացած անձրեւներից վարարած Աղստեւը շատ տեղերում վնասել է միջպետական ավտոճանապարհը, սակայն ճանապարհի եզրին գետափնյա քանդված տեղերը դեռ չեն նորոգել: Այդ ճանապարհը սպասարկում է «Քյավառ սերվիս» ՍՊԸ-ն: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը օգոստոսի 10-ին Իջեւանում կայացած ֆեստիվալին մասնակցելու համար հեծանիվով կամ ավտոմեքենայով անցել է այդ ճանապարհը, նա պետք է հանձնարարական տար՝ նորոգելու քանդված հատվածները. սակայն ճանապարհի քանդված հատվածները չեն նորոգվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԵՐԵՎԱՆՅԱՆ ԿՈԼՈՐԻՏ

ՌԵՍՏՈՐԱՆ ԱՅՑԵԼԱԾ ՀԱՅՏՆԻ ՀՅՈՒՐԵՐԸ

Արտուշ Բաբայանը՝ առավել հայտնի որպես Արտուշ պապիկ, իր հյուրընկալությամբ եւ հյուրասիրությամբ գրավել է շատ այցելուների սրտերը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արտուշ պապիկն ասաց, որ իր ռեստորանում այցելուների պակաս չունենալու գաղտնիքն այն է, որ մշտապես անարատ ուտեստներ են հրամցնում: Անգամ Արտուշ պապիկն ինքն իր ձեռքով է ապրանքներն ընտրում եւ տեղում պատրաստվող ուտելիքները պատրաստվում են այնպես, ինչպես կպատրաստվեին տանը:

«Լյուքս Անահիտը» կամ «Արտուշի մոտ» ռեստորանը, որը շատերը հենց այդպես էլ գիտեն, նաեւ հայտնի է նրանով, որ շատ հայտնի եւ սիրված դեմքեր են այդտեղ ճաշել: Հայտնի այնպիսի դեմքեր՝ ինչպիսիք են ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, Ալեք Մանուկյանի դուստրը՝ Լուիս Սիմոնը, լեգենդար Արմեն Ջիգարխանյանը, Ռոզի Արմենը, Ջորջ Քլոունին, Ժակ Շիրակը եւ այլք:

Նշենք, որ ռեստորանն իր անվանումը ստացել է Արտուշ պապիկի 58 տարվա կյանքի ընկերոջ՝ նրա Անահիտ կնոջ անունով:

Արտուշ պապիկը մեզ պատմել է նաեւ, որ հայտնի հյուրերի կողմից ստացել է մի շարք նվերներ, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինից: Ռեստորանում տեսանք նաեւ Վլադիմիր Սպիվակովի կողմից ստացված նվերները՝ լուսանկարներ, որոնք Սպիվակովն իր իսկ ձեռքով կախել է ռեստորանի պատից:

Ռեստորանի մասին խոսում են բոլորը, եւ անգամ եղել են խոսակցություններ, որ ռեստորանում ամեն բան շատ թանկ է, ինչը եւս պայմանավորել են այն փաստով, թե բարձրաստիճան շատ պաշտոնյաներ են եղել այնտեղ: Այս թեմային Արտուշ պապիկը եւս անդրադարձավ եւ նշեց, որ այդ խոսակցությունները չար լեզուների տարածած բամբասանքներն են, քանի որ ռեստորանում թանկ բան չկա, ամեն բան հարմարեցված է այցելուների գրպանին:

Տեղում զրուցել ենք նաեւ ռեստորանի այցելուների հետ, որոնցից մեկն արդեն 24 տարի է, ինչ այցելում է ռեստորան, իսկ մյուսը եկել էր Գերմանիայից եւ իրեն շատ լավ էր զգում հայկական մթնոլորտում:

Արտուշ պապիկն ու նրա կինը՝ Անահիտ Գյուրջյանը, ով եւս այնտեղ էր, ամուսնացած են շուրջ 58 տարի: Մեզ հետ զրույցում կինն ասաց, որ ամուսնու հետ ամուսնացել է, քանի որ աշխատասեր է եղել, ինչն էլ գրավել է:

Ընտանեկան գողտրիկ այս ռեստորանում բոլոր ճաշատեսակները պատրաստվում են Արտուշ պապիկի եւ տիկին Անահիտի տատիկների բաղադրատոմսերով եւ ճաշացանկը կազմված է հայկական ճաշատեսակներից:

Ռեստորանի հյուրընկալ պատերի ներսում խոսել ենք նաեւ ավագ խոհարար Արտակ Եսայանի հետ, ով նշեց, որ շուրջ 30 տարի է ինչ աշխատում է ռեստորանում եւ հաճույքով է գալիս աշխատանքի:

Մեզ հետ զրույցում Արտուշ պապիկը կիսվեց ռեստորանի պատմության ընթացքում հիշարժան մի քանի պատմություններով: Մի անգամ հյուրերին առաջարկել է փորձել իր կնոջ պատվին անվանում ստացած «Անահիտ» աղցանը, որը սեփական բաղադրատոմսով է պատրաստվում եւ նշել, որ չհավանելու դեպքում՝ կարող են չվճարել դրա համար. ճաշի ավարտին հյուրերը վճարել են ամբողջական գումարը:

Ահա այսպես, ընտանեկան ջերմ մթնոլորտում, համեղ եւ թարմ ուտեստների, բույրերի ու համերի ներքո էլ անցնում են շատ երեւանցիների երեկոները:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

ՈՂԻՄ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ

Կառավարության որոշմամբ փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքում, որի արդյունքում մարզառազմական պետական ուսումնական հաստատությունների սովորողներին անվանական կրթաթոշակ տրամադրելու նպատակով տրամադրվել է 30680,0 հազար դրամ:

Նշենք, որ արդեն մի քանի տարի է՝ հանրակրթական դպրոցների օլիմպիադաների մասնակից եւ հաղթող աշակերտներին տրամադրվում է անվանական կրթաթոշակ, ինչը խրախուսում է աշակերտների համակողմանի եւ ներդաշնակ զարգացումը: Այդ է փաստում տարեցտարի օլիմպիադաներին մասնակցող եւ հաղթող աշակերտների թվի աճը:

Մարզառազմական պետական ուսումնական հաստատությունների սովորողներին եւս խրախուսելու եւ ոլորտի գրավչությունը մեծացնելու նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով սահմանվել է այդ հաստատությունների սովորողներին անվանական կրթաթոշակի տրամադրման կարգը:

Գումարը կտրամադրվի ՀՀ-ում գործող մարզառազմական պետական ուսումնական 3 հաստատությունների 533 սովորողների, որոնցից 96-ը հանդիսանում է Արամ Մանուկյանի անվան ռազմամարզական մասնագիտացված վարժարանի սան, 187-ը՝ Արմավիրի Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարանի, իսկ 250-ը՝ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի (հաշվի է առնվել փաստացի սովորողների եւ ընդունելությամբ կանխատեսվող սովորողների թիվը):

Մարզառազմական պետական ուսումնական հաստատությունների սովորողների խրախուսումը կնպաստի ոլորտի գրավչության մեծացմանը, սովորողների առաջադիմության բարձրացմանը, զինվորական պատրաստության ուղղությամբ գիտելիքների եւ հմտությունների զարգացմանը, ինչպես նաեւ անձի մասնագիտության գիտակցված ընտրությանը:

ԿՀԱՆԴԻՊԵՆ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Արցախի թեմը նախաձեռնել է հանդիպումների շարք, որի ժամանակ Արցախի թեմի նախկին հոգեւորականները, մտավորականները, մշակույթի ու այլ ոլորտների գործիչները հանդիպումներ կունենան արցախահայության հետ: Հանդիպումների նպատակն է հոգեւոր առումով գոտեպնդել ու համախմբել մեր հայրենակիցներին:

Առաջին հանդիպումը տեղի կունենա Արցախի թեմի առաջնորդ Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի հետ ս.թ. օգոստոսի 30-ին՝ ժամը 19:00-ին: Հանդիպմանը ներկա կլինեն նաեւ Արցախի թեմի թեմական խորհրդի անդամները:

Հանդիպումն անցկացվելու է Երեւանում՝ Բաղրամյան 59 հասցեում:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 3 մարդ զոհվել է, 24-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՏ ՎԻՃԱԿՈՒՄ Է

«Պարադոքսալ իշխանություններ ունենք: Խոսում են Եվրոպայի հետ սերտացման ու մերձեցման մասին, բայց ԵՐԲԵՔ Հայաստանի ու Եվրոպայի միջեւ առեւտրաշրջանառությունն այսքան խղճուկ մակարդակի վրա չի եղել:» Այս մասին Ֆեյսբուքի իր էջում գրել է ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը:

«Այս տարվա առաջին կիսամյակում դեպի ԵՄ արտահանումները կազմել են մեր ընդհանուր արտահանումների ընդամենը 3,5%-ը: Անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտահանումները դեպի Եվրոպա կրճատվել են առավել քան 3 անգամ»,- գրել է նա:

ԿԱԹՆԱՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂ ԽՈՇՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Rabobank-ը թարմացրել է կաթնամթերք արտադրող խոշորագույն ընկերությունների տարեկան վարկանիշը՝ Global Dairy Top-20-ը՝ հիմնվելով 2023 թվականի արդյունքների վրա:

Ինչպես եւ մեկ տարի առաջ, ցուցակը գլխավորում էր ֆրանսիական Lactalis-ը, ընդ որում խումբը դարձել է առաջին արտադրողը, որի եկամուտը կաթնամթերքի վաճառքից գերազանցել է 30 միլիարդ դոլարը, ըստ Agroexoprt-ի՝ վերջին 4 տարիների ընթացքում Lactalis-ի վաճառքներն աճել են ավելի քան 11 մլրդ դոլար:

Աշխարհի կաթնամթերք արտադրող 20 խոշորագույն ընկերությունների միացյալ շրջանառությունը 2023 թվականին դոլարային արտահայտությամբ աճել է ընդամենը 0,3%-ով՝ նախորդ տարվա 8,1%-ով աճելուց հետո: Անցյալ տարի կաթի գների անկումը, համեմատած 2022 թվականի բարձր ցուցանիշների հետ, աճի զգալի դանդաղման հիմնական գործոնն էր:

ԱՃԵԼ ԵՆ ՆԱՐՆՋԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՆԵՐԸ

Նարնջի հյութի համաշխարհային գները հասել են պատմական առավելագույնին՝ վատ բերքի եւ հիմնական արտադրող երկրներում բույսերի հիվանդությունների տարածման պատճառով: Ինչպես տեղեկացնում է ՏԱՍՍ գործակալությունը, այդ մասին հաղորդել է Ռուսաստանի «Ագրոէքսպորտ» դաշնային կենտրոնը: Նյու Յորքի Միջմայրցամաքային բորսայում նարնջի հյութի սառեցված խտանյութը թանկացել է մինչեւ 5,04 դոլար մեկ ֆունտի դիմաց՝պատմության մեջ առաջին անգամ գերազանցելով 5 դոլարի շեմը: Այսպիսով, վերջին չորս շաբաթվա ընթացքում նարնջի հյութի գներն աճել են 16,13 %-ով, իսկ 12 ամսվա ընթացքում՝ 57,66 %-ով:

Գներն աճում են Բրազիլիայում նարնջի վատ բերքի ֆոնին. այս երկրին է բաժին ընկնում հյութի համաշխարհային արտադրության ավելի քան 70 %-ը:

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ Է «ԿԱՍՊԵՐՍԿԻՆ» 4

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՈՂՈՒԹՅԱՆ ԱՐՇԱՎ

«Կասպերսկի» ընկերության Կիբեռմիջադեպերին արձագանքման գլոբալ թիմի (Kaspersky Global Emergency Response Team, GERT) փորձագետները հայտնաբերել են խարդախ արշավ, որն ուղղված է ամբողջ աշխարհում Windows-ի եւ MacOS-ի օգտատերերի կրիպտոարժույթի եւ անձնական տվյալների գողությանը: Այն ստացել է Tusk անվանումը: Ենթադրվում է, որ գրոհների հետեւում կանգնած են ռուսալեզու չարագործները: Տվյալներ գողանալու համար օգտագործվում են ֆիշինգային ռեսուրսներ, ինֆոստիլերներ եւ կլիպերներ:

«Կասպերսկի» ընկերությունը տեղեկացնում է, որ սկզբում չարագործները զոհերին գայթակղելով հասցնում են ֆիշինգային կայքեր, որոնք նմանակում են տարբեր լեգիտիմ ծառայությունների դիզայնն ու միջերեսը: Նրանց ուշադրությունը գրավելու համար չարագործներն օգտագործում են տարածված թեմաներ, ինչպիսիք են web3-ը, կրիպտոարժույթը, արհեստական բանականությունը, առցանց խաղերը: Հայտնաբերված որոշ էջեր նմանակում են կրիպտոհարթակ, առցանց դերային խաղ եւ AI թարգմանիչ: Ուշադիր ուսումնասիրելիս ֆիշինգային ռեսուրսներում կարելի է տեսնել փոքր տարբերություններ բնօրինակից, օրինակ՝ անվանման մեջ կամ URL-ում: Սակայն, ընդհանուր առմամբ, դրանք շատ արժանահավատ տեսք ունեն, ինչը մեծացնում է հաջող գրոհի հավանականությունը:

Ֆիշինգային ռեսուրսները թույլ են տալիս կորզել օգտատերերի գաղտնի տվյալները, օրինակ՝ կրիպտոդրամապանակների գաղտնի բանալիները, ինչպես նաեւ զոհի սարք ներբեռնել վնասաբեր ԾԱ: Հետագայում չարագործները կարող էին կեղծ կայքի միջոցով հասանելիություն ստանալ կրիպտոդրամապանակին եւ վնասաբեր ծրագրերի միջոցով դրանից դուրս բերել միջոցները կամ գողանալ դրամապանակի հաշվառման տվյալները, վավերապայմանները եւ այլ տեղեկատվություն:

Արշավի շրջանակներում չարագործները տարածել են այնպիսի ինֆոստիլերներ, ինչպիսիք են Danabot-ը եւ Stealc- ը, ինչպես նաեւ կլիպերներ: Ինֆոստիլերները նախատեսված են գաղտնի տվյալների (այդ թվում՝ մուտքանունների եւ գաղտնաբառերի) գողության համար, իսկ կլիպերները ձեռք են գցում տվյալները փոխանակման բուֆերից: Օրինակ, եթե օգտատերը կրկնօրինակի էլեկտրոնային դրամապանակի հասցեն փոխանակման բուֆեր, ապա կլիպերը կարող է այն փոխարինել վնասաբեր հասցեով:

Վնասաբեր ԾԱ-ի ներբեռնման ֆայլերը տեղակայվում են Dropbox-ում: Դրանց ներբեռնումից հետո զոհը հայտնվում է հարմար միջերեսով գրավիչ ռեսուրսում, որտեղ նրան առաջարկվում է մուտք գործել կամ պարզապես չփակել էջը: Այդ ժամանակ ներբեռնվում են այլ վնասաբեր նիշքեր:

Tusk-ի վնասաբեր կոդը պարունակում է ռուսերեն տողեր: Բացի այդ, վնասաբեր ծրագրեր ներբեռնելու նիշքերում հանդիպել է «Մամոնտ» բառը, որը ռուսալեզու չարագործներն օգտագործում են զոհին մատնանշելու համար:

Գրոհողները, ամենայն հավանականությամբ, ֆինանսական նպատակներ են հետապնդում: «Կասպերսկի»-ի փորձագետները դա արտացոլել են արշավի անվանման մեջ՝ Tusk («Ժանիք»). մամոնտներին որսում էին հանուն արժեքավոր ժանիքների:

«Մեր վերլուծությունը ցույց տվեց, որ խոսքը մանրակրկիտ մտածված արշավի մասին է: Դա, ի թիվս այլնի, մատնանշում է այն հանգամանքը, որ գրոհները բաղկացած են մի քանի փուլերից եւ փոխկապակցված են: Դրանց հետեւում կարող է լինել ինչպես խումբ, այնպես էլ ֆինանսական նպատակներ հետապնդող անհատ չարագործ:

Kaspersky Threat Intelligence Portal-ի շնորհիվ մենք կարողացանք հայտնաբերել ենթաարշավներ տարբեր տարածված, այդ թվում՝ կրիպտոարժույթի, արհեստական բանականության, առցանց խաղերի, ինչպես նաեւ 16 այլ թեմաներով: Սա խոսում է այն մասին, որ չարագործները կարող են արագ հարմարվել արդիական օրակարգին եւ այն օգտագործել օգտատերերի վրա գրոհների համար»,- մեկնաբանում է «Կասպերսկի» ընկերության միջադեպերի հայտնաբերման եւ արձագանքման կոմպետենցիայի կենտրոնի ղեկավար Կիրիլ Սեմյոնովը:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝Նվեր Բալայանս, կորցրել եմ տրակտորի՝ 000635 համարի տեխանձնագիրը: Գտնողին խնդրում եմ զանգահարել 097 240 290 հեռախոսահամարով:

ՄԵՏԱՂՆԵՐԻ ԳՆԵՐԸ՝ ԿՐԿՆԱՊԱՏԿՎԱԾ

Չինաստանի արտահանման սահմանափակումները կիսահաղորդչային արդյունաբերության մեջ օգտագործվող ռազմական եւ կապի սարքավորումների բաղադրամասերում գալիումի եւ գերմանիումի մատակարարման հարցում հանգեցրել են արեւմտյան շուկաներում այդ ռազմավարական մետաղների գների գրեթե կրկնապատկմանը: Այս մասին հայտնում է Financial Times (FT) թերթը:

«Ազգային անվտանգության շահերից ելնելով» այս մետաղների արեւմտյան հաճախորդներին մատակարարելու նման սահմանափակումները «կարող են ազդել առաջադեմ միկրոպրոցեսորների եւ օպտիկական արտադրանքների արտադրության վրա», ասվում է հրապարակության մեջ: ԱՄՆ Երկրաբանական ծառայության տվյալներով՝ Չինաստանն արտադրում է գալիումի 98%-ը եւ գերմանիումի 60%-ը:

«Չինաստանից [մատակարարման հետ կապված] իրավիճակը կրիտիկական է, մենք կախված ենք նրանցից», - մեջբերում է պարբերականը տուժած արեւմտյան ընկերություններից մեկի աշխատակցի խոսքը:

«Եթե Չինաստանը կրճատի գալիումի արտահանումը, ինչպես եղավ առաջին կիսամյակում, մեր պաշարները կսպառվեն եւ կառաջանա դեֆիցիտ», - ասել է նա: Գերմանական Tradium ընկերության ներկայացուցիչ Յան Գիզեի խոսքով, «արտահանման վերահսկման այս միջոցները լրացուցիչ սթրես են ստեղծում բոլորի համար Չինաստանից դուրս եւ բարդացնում իրավիճակը շուկաներում»:

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը օգոստոսի 27-ի նիստում նախնական համաձայնություն է տվել «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կանոնադրական հիմնադրամում «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 75 եւ ավելի տոկոս ուղղակի նշանակալից մասնակցության ձեռքբերմանը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ»

ՓՈՐՁՈՒՄ Է ՅՈՒՐԱՑՆԵԼ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ

Օրեր առաջ ադրբեջանական Culture of Azerbaijan կայքը տարածեց հայտարարություն Արցախի «Մե՛նք ենք մեր սարերը» (Տատիկ-պատիկ) հայտնի հուշարձանի մասին՝ նշելով, որ այն կառուցվել է Ադրբեջանի Խանքենդի քաղաքում 1967 թվականին եւ որ այն «Ադրբեջանի բազմամշակութային եւ ազգային-կրոնական հանդուրժողականության բազմաթիվ օրինակներից մեկն է»: Այս մասին հոդված է հրապարակել Monument Watch-ը:



«Հանրահայտ է, որ հուշարձանը հայկական Արցախի ժամանակակից խորհրդանիշներից մեկն է եւ որ այն ստեղծվել է որպես նշան եւ խորհուրդ երկրամասի հայ ինքնության: Ավանդական կեցվածքով եւ արտաքինով տարեց ամուսնական զույգը հավաստումն էր արցախահայերի պատմական անցյալի եւ ապագա հույսերի: Հույսեր, որ այսօր ի դերեւ են դարձել Ադրբեջանի հայասպան քաղաքականության արդյունքում: Հատուկ Հայաստանից բերված կարմիր տուֆից կերտված կոթողի քանդակագործն է Սարգիս Բաղդասարյանը, իսկ ճարտարապետը՝ Յուրի Հակոբյանը: Քանդակագործն իր աշխատանքը բնութագրել է հետեւյալ կերպ. «Հուշարձանն իրենից ներկայացնում է ավանդական տարազով տարեց արցախցի ամուսինների՝ ուս-ուսի, հպարտ ու անհողդողդ կեցվածքով ու սեւեռուն հայացքով: Կոթողը պատվանդան չունի, բայց կարծես լեռնաբլուրը ճեղքվել է, եւ նրանք այդ ճեղքից բարձրացել, կանգնել են՝ ոտքերը ամուր դրած հայերի հողի մեջ»:

Արցախի ամբողջական օկուպացիայից հետո պաշտոնական ադրբեջանական կողմը երկար ժամանակ գրեթե չէր անդրադառնում այս հուշարձանին: Հուշարձանին, որն Արցախի հայության ամենավառ ու հանրահայտ խորհրդանշանն էր, չէին անդրադառնում եւ «չէին նկատում» օկուպացված Ստեփանակերտ այցելող ադրբեջանցի լրագրողները, մեդիագործիչները: Միայն որոշ լրատվականներում հնչեցվում էին կարծիքներ, որ այն պետք է քանդել:

2023 թվականին վերջին եղան հատուկենտ հրապարակումներ, որտեղ նշվում էր, որ հուշարձանը հայերը «հայկականացրել են». ադրբեջանական կողմը փորձում էր տարածել այն թեզը, որ դեմ են ոչ թե հուշարձանին, այլ դրա «գաղափարական ազգայնական մեկնաբանությանը»:

Վերջերս հատուկ այս հուշարձանին անդրադարձավ օկուպացված Ստեփանակերտը լուսաբանող Քյամրան Ռազմովարը, որի հիմնական շեշտադրումն այն էր, որ հուշարձանը կանգնեցվել է խորհրդային տարիներին, երբ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի մաս էր, ինչը ըստ նրա նշանակում է, որ հուշարձանը կանգնեցվել է խորհրդային Ադրբեջանի բյուջեից հատկացված գումարներով, ինչը նշանակում է, որ այն ադրբեջանական է:

Այս շեշտադրումները կարեւոր են նրանով, որ ադրբեջանական կողմը պրոիշխանական իր քարոզչի միջոցով սկսել է հուշարձանը յուրացնելու գործընթաց, որտեղ երեւում են հուշարձանին վերաբերող թեզերը՝ այն կառուցված է Բաքվի գումարներով, այն ադրբեջանական է եւ ցուցում է հայերի հանդեպ Ադրբեջանի իշխանությունների հանդուրժողականությունը խորհրդային տարիներին:

Հուշարձանի հանդեպ Ադրբեջանի վարած քաղաքականությունը ժառանգության յուրացման փորձ է, երբ ոչ միայն կտրվում է հայկական պատկանելությունից, այլեւ Ադրբեջանի համար ստեղծում բազմամշակութային եւ հանդուրժող երկրի կերպար: Այսպիսի քաղաքականությամբ Ադրբեջանը խախտում է ՄԱԿ-ի՝ 2005 թ. Փարիզում ընդունած «Մշակութային ինքնարտահայտման ձեւերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին» կոնվենցիան»,-մասնավորապես գրված է հոդվածում:

ՅՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ՄԵԿՆԵԼ Է ՓԱՐԻԶ

Հայաստանի Պարալիմպիկ հավաքականը մեկնել է Փարիզ, որտեղ կմասնակցի ամառային Պարալիմպիկ խաղերին:

Օգոստոսի 26-ից սեպտեմբերի 8-ը Փարիզում մեկնարկելիք Պարալիմպիկ խաղերին Հայաստանն առաջին անգամ վարկանիշ նվաճած ներկայացուցիչներ կունենա:

Խաղերին կմասնակցեն Հայաստանի ազգային Պարալիմպիկ հավաքականի մարզիկներ Գրետա Վարդանյանը (պարածանրամարտ), Սմբատ Կարապետյանը (սայլակավազք) եւ Սարգիս Ստեփանյանը (գնդի հրում):

Թիմը Ֆրանսիա է մեկնել Հայաստանի Պարալիմպիկ կոմիտեի նախագահ Հակոբ Աբրահամյանի գլխավորությամբ:

ՀԱՅԿ ԱՎԱՆԵՍՅԱՆԸ՝ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հավաքականի անդամ,60 կգ քաշային Հայկ Ավանեսյանը բրոնզե մեդալ է նվաճել Հորդանանում ավարտված Մ17 տարեկանների աշխարհի առաջնությունում: Այս մասին տեղեկացնում են ԿԳՄՍՆ-ից:

Ավանեսյանը պայքարը սկսել է 1/8 եզրափակչից, որտեղ 9:4 հաշվով առավելության է հասել Պուերտո Ռիկոյի ներկայացուցչի նկատմամբ, քառորդ եզրափակչում Ավանեսյանը 13:2 հաշվով հաղթել է Թուրքիան ներկայացնող Բիլալ Ինջեին, սակայն կիսաեզրափակչում պարտություն է կրել եւ պայքարել բրոնզե մեդալի համար:

Վճռորոշ գոտեմարտում Ավանեսյանը 5:2 հաշվով հաղթել է Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Դանուշ Ջովկարին:

Մ17 տարեկանների աշխարհի առաջնության բրոնզե մեդալների համար պայքարել են նաեւ 45 կգ քաշային Մհեր Հակոբյանն ու 55 կգ քաշային Գագիկ Ղազարյանը, սակայն զիջել են մրցակիցներին:

Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի պատանեկան հավաքականի կազմում ընդգրկված էին նաեւ Արմեն Պապիկյանը (48 կգ), Աշոտ Գյուլնազարյանը (51 կգ), Եղիշե Մոսեսյանը (65 կգ), Վահե Սաղյանը (71 կգ), Սահակ Հովհաննիսյանը (80 կգ), Հրաչիկ Մկրտչյանը (92 կգ) եւ Անդրանիկ Ջաղեթյանը (110 կգ):

Ավելի վաղ Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի պատանեկան հավաքականի անդամները 1 արծաթե եւ 2 բրոնզե մեդալ էին նվաճել Մ17 տարեկանների աշխարհի առաջնությունում:

Հայաստանի թիմի կազմում ԱԱ-ի արծաթե մեդալին եւ փոխչեմպիոնի կոչմանն արժանացել էր 45 կգ քաշային Մարատ Աճեմյանը, իսկ բրոնզե մեդալները նվաճել էին Յուրիկ Մխիթարյանը (55 կգ) եւ Նարեկ Գրիգորյանը (65 կգ):

Մ17 տարեկանների աշխարհի առաջնությանը 576 ըմբիշ է մասնակցել:

ՆՅՈՒ ՋԵՆԵՐԵՅՇՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄ՝ ԴԱՍԱԿԱՆԻՆ

«Նյու Ջեներեյշն» փրոջեքթի նախաձեռնությամբ սեպտեմբերի 11-ին՝ ժամը 19:00-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա բացառիկ եւ յուրօրինակ նախագիծ: Առաջին անգամ Հայաստանում կներկայացվի ՎԻՎԱԼԴԻ հայտնի գլուխգործոց «Տարվա եղանակները» նորարարական լուծումներով, DJ ռեմիքսով՝ Նյու Ջեներեյշն նվագախմբի մասնակցությամբ:

Այս նախագծի նպատակը դասական ու սիրված ստեղծագործության միախառնումն է գերժամանակակից տեխնոլոգիաների հետ: Այս նոր մոտեցումը կսիրվի ինչպես արդեն փորձառու մասնագետների, այնպես էլ դասական արվեստին ոչ այդքան մոտ հանդիսատեսի կողմից: Համերգի ընթացքում, ինչպես նաեւ համերգից առաջ համերգասրահի ճեմասրահում շքեղ լուսային լուծումները կուղեկցվեն տպավորիչ ռիթմերով: Նախագծի կարեւոր նպատակներից է նաեւ երիտասարդներին ավելի մոտեցնելը դասական արվեստին:

Նախագիծն ունի շարունակական բնույթ, առաջիկայում ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում նախատեսվում են VIVALDI DJ, Aram Khachaturian DJ, Arno Babajayan DJ, Mozart DJ եւ այլ նախագծեր:

Համերգին մասնակցում են՝

. Beatbox հայկական ասոցիացիայի ղեկավար՝ Բագրատ Տերտերյանը /DJ BeatMan/,

. կոմպոզիտոր, գործիքավորող, երգահան, դաշնակահար Արման Պեշտմալջյանը,

. ջութակահար՝ Էրիկ Մանուկյանը /մենակատար/, ինչպես նաեւ «Նյու Ջեներեյշն» նվագախումբը, գեղարվեստական ղեկավար՝ Նարեկ Գասպարյան:

Հանդիսատեսին սպասվում է բացառիկ համերգ՝ լի վառ ու հիշվող զգացողություններով:

● *Սեպտեմբերի 8-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Չաո» սիրային կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝ 2.000-5.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՄԱՔՍԱՅԻՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ Երեւանում գրանցված կազմակերպությունը երրորդ երկրից ապրանքներ ներմուծելիս մաքսային ձեւակերպումները կարող է արդյոք իրականացնել Սիսիանում:

Կարո Հարությունյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի 2003 թվականի հուլիսի 4-ի N03/42-Ն հրամանի 1-ին կետի համաձայն՝ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային ձեւակերպումների իրականացման վայրեր են այն տարածաշրջանային մաքսատները, որոնց գործունեության գոտին ընդգրկում է տվյալ կազմակերպության գտնվելու վայրը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 865-Ն որոշման 2-րդ կետի գ) ենթակետի համաձայն՝ Արարատյան տարածաշրջանային մաքսատան գործունեության տարածք է հանդիսանում Երեւանը, Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերի վարչական տարածքները, ուստի Երեւանում գրանցված կազմակերպության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային ձեւակերպումների իրականացման վայր է համարվում Արարարատյան տարածաշրջանային մաքսատունը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է թույլատրել «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով հայտարարագրված ապրանքների բացթողնումը կամ ներմուծված ապրանքների նկատմամբ կիրառված «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգի ժամկետի երկարաձգումը միայն մեկ անգամ՝ մինչեւ երկու տարին չգերազանցող ժամկետով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՎԱՆԴՆԵՐ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող են ավանդատուները տեղեկանալ ավանդների հատուցման դեպքի մասին:

Էմմա Գրիգորյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հիմնադրամը հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում եւ առնվազն հանրային մեկ լրատվամիջոցով հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին՝ նշելով երաշխավորված ավանդը ստանալու կարգը՝ ներառյալ ավանդատուի գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջի ներկայացման կարգը, անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկը, պայմանները, եղանակները, ժամկետները:

Հատուցման դեպքին հաջորդող 20-րդ աշխատանքային օրվանից առնվազն մեկ օր առաջ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում եւ առնվազն հանրային մեկ լրատվամիջոցով հրապարակում է լրացուցիչ հայտարարություն, որտեղ նշվում են՝

ա) երաշխավորված ավանդների վճարումն իրականացնող բանկի եւ դրա մասնաճյուղերի անվանումները եւ հասցեները,

բ) ավանդատուի գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված պահանջի եւ հիմնադրամի տրամադրած ավանդատուների ցուցակի միջեւ տեղեկությունների անհամապատասխանության դեպքում՝ երաշխավորված ավանդի հատուցումը ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Երաշխավորված ավանդի հատուցումն իրականացվում է ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ՝ ավանդատուի նշված հաշվին փոխանցման միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Երեկ հայտնի դարձավ, որ ռեժիսոր Ջառա Ջյանի «Ես վրեժխնդիր կլինեմ աշխարհից սիրո միջոցով. Սերգեյ Փարաջանով» վավերագրական ֆիլմը գրանցել է մեծ հաջողություն՝ ընդգրկվելով Վենետիկի 81-րդ միջազգային կինոփառատոնի պաշտոնական ծրագրում՝ VENICE CLASSICS խմբի մրցութային բաժնում:

Ֆիլմի համաշխարհային պրեմիերան տեղի է ունենալու սեպտեմբերի 6-ին Վենետիկում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+11 + 16 +28 + 33
Կոտայքի լեռներ	+10 + 16 +28 + 30
Կոտայքի նախալեռներ	+20 + 23 +35 + 36
Գեղարքունիք	+11 + 16 +25 + 28
Լոռի	+ 14+ 18 +29 + 33
Տավուշ	+ 18+ 22 +31 + 36
Արագածոտնի լեռներ	+ 11 + 14 +17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18 +28 + 31

Արարատ	+ 23 + 25 +38 + 39
Արմավիր	+ 20+ 22 +37 + 38
Վայոց ձորի լեռներ	+11 + 14 +29 + 31
Վայոց ձորի նախալեռներ	+21 + 23 +36 + 39
Սյունիքի հովիտներ	+21 + 24 +36 + 39
Սյունիքի նախալեռներ	+ 14 + 17 +30 + 32
ԼՂՀ	+ 13 + 16 +29 + 32
Երեւան	+30 + 32 + 36 + 38

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.8.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*